ԿԱՐԾԻՔ

ՄԱՆՈՒՇ ԷՄԻԼԻ ԲԱԼԱՅԱՆԻ

«ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»

ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մանուշ Էմիլի Բալայանի թեկնածուական ատենախոսությունն իբրև պոլսահայ գրող Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործության ամբողջական քննության փորձ կառուցվածքային ճիշտ բաժանում ունի, ինչը նշանակում է, որ նյութը ճիշտ է համակարգված: Ատենախոսն առաջին երկու գլուխներում քննել է գրողի փոքր կտավի ստեղծագործությունների՝ պատմվածքների՝ մասնավորապես «Բառասխալ» և «Մարդոց մեծութեան և խեղճութեան մասին» ժողովածուներն ու «Առաստաղ» և «Առաստաղին միւս կողմը» վեպերը, երրորդ և չորրորդ գլուխներում՝ թատերգություններն ու խոհագրությունը՝ ապահովելով գրողի ստեղծագործության ամբողջական ընդգրկումը հիմնավարող կառուցվածք, գլուխների հաջորդականության տրամաբանություն և գլուխների ծավալային համամասնություն:

Ինչ վերաբերում է ներածությանը, ապա հաջողված պիտի համարել նաև հարցի պատմության նյութի իմացությունն ու համակարգումը: Ատենախոսին հաջողվել է առանձնացնել և համառոտ ներկայացնել իր հեղինակի ստեղծագործությանն անդրադարձած սփյուռքահայ և հայրենի գրականագետների հոդվածների և ուսումնասիրությունների հիմնախնդիրները: Սակայն իբրև հիմնական թերացում հարկ է մատնանշել, որ Հատտեճյանի ստեղծագործական մեթոդի ու նրա ստեղծագործության մեջ գոյապաշտական գրականության ինչ-ինչ միտումների և մոտիվների մասին ատենախոսության հեղինակն այդպես էլ բավարվում է միայն ակնարկներով ու մակերեսային դիտարկումներով: Այսպես, նշելով. «Ռ. Հատտեճյանը խոստովանում է, որ ուսանելու տարիներին իր գրական-գեղագիտական հայացքների ձևավորման մեջ չափազանց մեծ է եղել ժամանակակից ֆրանսիական գոյապաշտական

գրականության ազդեցությունը, մարդկային փոխհարաբերությունները սկսել էր քննել իր համար ուղենիշ դարձած սարտրյան աշխարհայացքի տեսանկյունից» (էջ 14), ատենախոսն այդպես էլ խորքային համեմատական քննության չի կատարում ֆրանսիական էկզիստենցիալիզմի և Հատտեճյանի արձակի ու դրամատուրգիայի միջև, և սա ատենախոսության հիմնական թերությունն է: Ավելին, էկզիստենցիալիզմի վերաբերյալ որոշ դիտարկումներ և պատկերացումներ սխալ են: Այսպես ակնհայտ սխալ է պնդումը, թե ըստ էկզիստենցիալիզմի «մահը անհատի գոյության ավարտն է» և «Ռ. Հատտեճյանը հավատարիմ է գոյապաշտ փիլիսոփայության այն տեսակետին, որ կյանքից դուրս չկա ուրիշ կյանք» (էջ 38): Այս պնդումը վերաբերում է բացառապես էկզիստենցիալիզմի աթեիստական ճյուղին, որի ներկայացուցիչները Սարտրն ու Կամյուն էին: Էկզիստենցիալիզմի վերաբերյալ որոշ դիտարկումներ էլ կարելի էր ներկայացնել առաջնային աղբյուրներից, ոչ թե օրինակ, բավարարվել Արա Առաքելյանից կամ խորհրդային հրատարակության փիլիսոփայական բառարանից արված մեջբերումներով, ինչպիսին ազատության էկզիստենցիալիստական ըմբռնման վերաբերյալ 67-րդ և 100 էջերում արված մեջբերումներն են: Կարելի է նշել նաև մասնակի այլ թերություններ՝ տեսական որոշ դիտարկումների ու բնորոշումների մակերեսայնությունն ու սխալները: Այսպես անհասկանալի է, թե ինչ է նշանակում «վեպի ազգային կոմպոզիցիա» (էջ 10), անհիմն է բացատրությունը, թե «հայ գրականության մեջ թատերգությունը միշտ զիջել է մյուս սեռերին»՝ քանի որ «դրամատիկական սեռը հնարավորություն է ստեղծում իրական կյանքի պատկերն ուղղակիորեն ներկայացնել՝ առանց որևէ պայմանականության» (էջ 89), հարկ կա արդյո՞ք ասելու, թե դրամատիկական սեռն իր ձևավորման վաղ շրջանից սկսած մինչև 21-րդ դար հիմնված է պայմանականության վրա՝ զուտ բեմական պայմանականությունից ու դասական դրամատուրգիայում չափածո խոսքի պայմանականությունից մինչև էկզիստենցիալիզմի և աբսուրդի թատրոնի իրադրային պայմանականություն:

Անշուշտ աշխատանքի արժանիքներից մեկն այն է, որ Մանուշ Բալայանը Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործություններից բացի սփյուռքահայ գրականության մեծ ծավալի նյութ է յուրացրել և կարողացել հեղինակի ստեղծագործությունը դիտարկել գրական ավելի լայն համատեքստում՝ հիմնականում դիպուկ համեմատություններ անցկացնելով թե՛ սփյուռքահայ, թե՛ արևելահայ գրողների և նրանց ստեղծագործությունների հետ: Երբեմն, սակայն, այդ զուգահեռումները կարող էին ավելի ծավալուն և խորքային լինել:

Որպես թերություն կարելի է նշել որոշ հատվածներում ձևակերպումների, մտքերի շարադրման մշուշապատ, անհասկանալի, երբեմն խրթին ոճը: Որոշ ձևակերպումներ հիրավի կարիք ունեն հստակեցման:

Թեկնածուական ատենախոսության ընդդիմախոսության մեջ, մենք, սակայն, կարևորում ենք ոչ այնքան բացթողումների քննադատությունը, որքան խնդրի գիտական պատմության նյութի համակարգման կարողությունների և ատենախոսի վերլուծական հմտությունների արժևորումը, իսկ Մանուշ Էմիլի Բալայանն այդ կարողություններին ու հմտություններին անշուշտ տիրապետում է: Պակաս կարևոր չէ նաև, որ թերացումներն ու բացթողումները ոչ միայն չեն գերակշռում, այլև չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները: Ողջունելի է հատկապես, որ ատենախոսն ավելի շատ նախապատվություն է տալիս նյութի վերլուծության, քան սյուժեների վերապատման մեզանում լայնորեն տարածված նկարագրական սկզբունքին: Ուստի «Ռոպեր Հատտեճյանի ստեղծագործության գեղագիտությունը» թեկնածուական ատենախոսության արժանիքները թույլ են տալիս այն երաշխավորել հրապարակային պաշտպանության և միջնորդել հարգարժան մասնագիտական խորհրդին Մանուշ Էմիլի Բալայանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ բ. գ. թ. Հրաչյա Սարիբեկյան